

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Մարդու խօսակցութեան առարկան, ինչպէս մարդը ինքը, երեք բանի կը յանդի- Աստուծոյ գովաբանութեան, որեւէ ճշմարիտ բան ուսանելու, կամ կարե- ւոր բաներ ուսուցանելու: Իսկ ով որ, ասոնցմէ օտար բան կը խօսի, մարդ- կութեան սահմանէն կը շեղի, որով- հետեւ իսկոյն կ'իյնայ կ'մ' Աստուծմէ տրտնջալու, կամ մոլորութեան ուս- ման, կամ անարժաններուն ուսուցման մէջ:

Առաքինութիւնը առաւել եւս կ'ա- ճի Աստուծոյ համար նեղութիւն կրե- լով, եւ երբ *գիրկը* սիրով կը յանձնէ խաչին՝ ոչմէկ դժուարութիւն կը զգայ: Որովհետեւ երբ մէկը մտքին մէջ կը դնէ հաստատուն կերպով վիշտեր կրել՝ Աստուծոյ հանդէպ վատն ու սէրը պահպանելու համար, վիշտերը իսկոյն կ'աւարտին: Եւ ով որ կը յիշէ մեր Քրիստոս Աստուծոյ չարչարանքները, կը համբերէ աշխարհի ամէն նեղու- թեան, մանաւանդ որ իրեն աւելի դառ- նագին վիշտերու ու նեղութեան ար- ժանի կը համարէ:

Փշալից ցանկապատը կ'արգիլէ յա- փըշտակողները այգի մտնել ու անոր պտուղները փճացնել: Նեղութիւններն ու վիշտերը հոգիներու թշնամիին թոյլ չեն տար մտնել առաքինիին սիրտը եւ անոր բարեմտութիւնը կողոպտել: Ով որ կարող է խաչը ուսերուն կրել՝ անոր վայել չէ գայն գետնաքարչ ընել:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Չեմ ուզեր շարունակել նամակին ընթերցումը: Անձնասպանութեան փորձեր, յուսալքութիւն, քնէածու- թիւն (hypnose) եւ ջղային համակար- գի խանգարում: Այս է նամակին բո- վանդակութիւնը: Կարելի է արագօ- ընէն կարդալ. բայց երբ կը խորհիս որ մարդը ծանր ապրումներու մէջ է, գէշ կը զգաս: Մենք կրնանք ուրա- խանայ մեր Փրկչին համար: Կրնանք ուրախանալ, որ կ'ապրինք իրեն հա- մար եւ կը ծառայենք միայն Տիրոջ: Կրնանք համոզուիլ, որ կը լսէ մեր աղօթքները, որ մեր բարի հովիւն է Ան: Բայց չէ՞ որ կան մարդիկ, որոնք Սատանան ամուր մը շղթայեր է մը- ռայլ խորհուրդներով եւ անձնասպա- նութեան գաղափարներով: Անկէ սիրտս շատ կը ցաւի: Պէտք է աւելի եւ աւելի շատ աղօթել անոնց համար, որոնք իրենց կամքին հակառակ ին- կած են այդ շղթաներուն մէջ: Օրի- նակ, երբ ծնողը ինքնակամ կերպով իր գաւակը տարեր է *բուժային* քով, արդէն իսկ Սատանային յանձնած է:

Աստուծոյ գաւակներ, որ Տիրոջ ուրախութիւնը եւ ուժը կը հանդիսա- նաք, յիշեցէ՛ք այդ խեղճ գոհերը, որոնք շղթայուած են չարին ծանր կապանքներով, բայց շատ կ'ուզեն ա- գատիլ անոնցմէ: Ձեր աղօթքներուն մէջ մի՛ մոռնաք գանոնք: Ձեր վրայ առէ՛ք այդ սուրբ պարտականու- թիւնը, աղօթեցէ՛ք, որ Աստուած անոնց ալ Փրկիչը եւ Մխիթարիչը դառնայ:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 18 ՆՈՅՆՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 47

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 11.1-13

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՅԻՍՆԱԿԻ ՊԱՅՈՑ

Պատահեցաւ, որ Յիսուս տեղ մը կ'աղօթէր: Երբ աղօթելը վերջացուց, իր աշակերտներէն մէկը ըսաւ. «Տէր. մեզի աղօթել սորվեցուր, ինչպէս որ Յովհաննէս իր աշակերտներուն սորվեցուց»:

Յիսուս ըսաւ. «Երբ կ'աղօթէք, ըսէ՛ք.- Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի ա- նունդ. թող գայ արքայութիւնդ. թող կայսարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը շնորհէ մեզի օրէ օր: Եւ ներէ՛ մեր մեղքերը, քանի մենք ալ կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ շարէն ազարէ»:

Եւ ապա շարունակեց. «Ենթադրենք թէ ձեզմէ մէկը բարեկամ մը ունի, որուն կը դիմէ գիշեր ատեն ու կ'ըսէ. "Բարեկամ, ինձի երեք հաց փոխ տուր, որովհետեւ ճամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ": Անիկա ներսէն կը պատասխանէ ըսելով. "Մի՛ յոգնեցներ զիս. դռները արդէն իսկ գոցած են եւ փոքրիկներս քովս անկողինին մէջ են. հետեւաբար չեմ կրնար ելլել տալ քեզի":

Վստահ եղէ՛ք, որ նոյնիսկ եթէ բարեկամութեան սիրոյն չելլէ եւ անոր ուզածը չտայ, սակայն թախանձանքներուն տեղի տալով պիտի կատարէ անոր խնդրան- քը: Եւ ես կ'ըսեմ ձեզի. խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք եւ պի- տի գտնէք, բախտեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի: Որովհետեւ խնդրողը պիտի ստանայ, փնտռողը պիտի գտնէ եւ բախողին առջեւ դուռը պիտի բացուի: Ձեր մէջ կա՞յ հայր մը, որուն զաւակը ձուկ ուզէ եւ ինք ձուկի փոխարէն օձ տայ եւ կամ կարիճ տայ՝ երբ զաւակը հաւկիթ խնդրէ: Արդ, դուք որ այսքան չար էք եւ գիտէք ձեր զա- ւակներուն լաւ պարգեւներ տալ, վստահ եղէ՛ք որ ձեր երկնաւոր Հայրը շատ ատելի լաւ պարգեւ մը՝ Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ՝ ԱՆԴՐԷՅԻ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍԻ

Անդրեաս Առաքեալ

Անդրեաս առաքեալ Պետրոս առաքելի եղբայրն է, որ Գալիլիոյ լիճին եղերքը իր եղբորը՝ Պետրոսի հետ, կը կանչուի Քրիստոսի կողմէ առաքելութեան:

Անդրեաս նախապէս եղած է Յովհաննէս Մկրտիչի աշակերտը եւ լսած ըլլալով Յովհաննէսի վկայութիւնը Յիսուսի մասին նախքան Յիսուսէ կանչուիլը, արդէն անպաշտօն հետեւողը եղած է Յիսուսի եւ այդ պատճառով կոչուած է Նախակոչ առաքեալ:

Անդրեաս առաքեալ շատ քիչ կը յիշուի աւետարաններուն մէջ: Աւանդաբար կ'ըսուի թէ եղած է Սկիւթացիներուն քարոզիչ առաքեալը եւ սակայն եկեղեցի չէ հիմնած այնտեղ: Նաեւ քարոզած կը նկատուի Հիւսիսային Յունաստանի մէջ, եւ նահատակուած Բաթրաս քաղաքին մէջ բազմապատկութեան նշանին նման խաչի մը վրայ, որով խաչի այդ ձեւը կը կոչուի նաեւ Ս. Անդրէասի խաչ:

Փիլիպպոս Առաքեալ

Փիլիպպոս առաքեալ Բեթսահի-դայէն էր, Անդրեաս եւ Պետրոս առաքելներուն քաղաքէն (ՅՀ 1.44):

Յիսուս երբ կը կանչէ զինք առաքելութեան, Փիլիպպոս առաքեալ առանց ժամանակ կորսնցնելու կ'երթայ եւ կ'աւետէ Նաթանայէլին՝ թէ գտած են այն մարդը, որու մասին Օրէնքի գիրքին մէջ գրուած է (ՅՀ 1.45):

Փիլիպպոս առաքեալ երեք տարիներ հետեւեցէ ետք Քրիստոսի, միւս առաքելներուն նման, կ'անցնի առաքելութեան եւ ըստ աւանդութեան կը քարոզէ Փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի խաչելութեամբ:

ՏԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՆ ՊԱՀԵՐՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Որք պիտի չձգեմ ձեզ. կրկին պիտի գամ ձեզի: Մօտ ատենէն այլեւս աշխարհը զիս պիտի չտեսնէ, բայց դուք պիտի տեսնէք զիս, որովհետեւ ես կ'ապրիմ եւ դուք ալ պիտի ապրիք: Այն օրը դուք պիտի գիտնա՞ք՝ թէ ես Հօրս մէջ եմ, դուք իմ մէջս եւ ես՝ ձեր մէջ: Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ա՛ն է որ զիս կը սիրէ: Եւ Հայրս պիտի սիրէ զիս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ զայն եւ ինքզինքս յայտնեմ անոր:

Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խոռվիք ու մի՛ վախնա՛ք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ՛ «Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»: Եթէ զիս սիրէիք, ուրախ պիտի ըլլայիք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախքան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատա՛ք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ այդ է պատճառը, որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: (Յով. 14.15-21,27-31)

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ ՄԱՔՐԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՃԱՐԸ՝ ՄԵՐ ԱՆՁԵՐԸ

Մեր անձերը եւս արժանացնենք աստուածային ողջոյնին՝ մեր ազատ կամքով, որովհետեւ Անոր տունն ենք, եւ կ'արժանացնենք եթէ բարեգործութեամբ զՔրիստոս մեր մէջ ընդունինք: Իսկ եթէ զգայութեամբ աւելնք եւ զարդարենք մեր անձերը, ինչպէս նաեւ աստուածային ողջոյնին հակառակ եղող ամէն բան՝ որպէս անպէտք աղբ դուրս թափենք, Բանը (Քրիստոս) ոչ միայն կը փճացնէ իր հակառակորդը եւ մեր մէջ կը բնակի, ինչպէս Մարիամին, այլ Հայրը եւս իր հետ ներս կը բերէ, ինչպէս ըսաւ. «Ան որ զիս կը սիրէ, խօսքս կը պահէ եւ Հայրս ալ զինք պիտի սիրէ. պիտի գանք եւ բնակինք անոր մէջ (Յովհ. 23): Ան որ իսկապէս կը սիրէ Յիսուսը՝ ճշմարիտ խաղաղութիւնը, երբեք չ'ըներ այն գործերը, զորս Բանը կ'ատէ, այսինքն ամէն տեսակի մեղքերն ու անկարգութիւնները՝ արծաթասիրութիւնը, ազահութիւնը, ատելութիւնը եւ ռիսկալութիւնը, անողորմութիւնն ու քիւնախնդութիւնը, նախանձը եւ բամբասանքը, շնուցութիւնը, գողութիւնն ու սպաննութիւնը, որկրամոլութիւնը, զինովութիւնը եւ անոնց նման բոլոր այն արարքները, զորս կ'ատէ Յիսուս՝ խաղաղութեան տուիչը:

ԻՍԱՍՏՈՒՆ ԽՕՍԸ

Եթէ բերնովդ խոստովանիս թէ՛ Յիսուս Տէր է եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ՛ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց, կը փրկուիս: (Հռ. 10.9)

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ԽԱՂԱՂ ԸՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹԸ

Բարեբար Տէր, որ քու մեծ գթութեամբ յաւիտեան կան հանգիստը պատրաստեցիր առաքիներեամբ վատակամներուն համար եւ քաղցր ձայնով քեզի կանչեցիր մեղքով ծանրաբեռնուածներն ու տառապողները: Շընորհէ՛, Տէր, որ մեզի եւս անխոռվ խաղաղութեամբ անցնենք այս գիշերը, եւ մեղքերու ծանրութենէն յոգնածներս քու ողորմութեամբ հանգստացուիք եւ արժանի ըրէ՛ մշտնջենաւոր հանգիստին՝ բոլոր սուրբերուն հետ միասին: Եւ տո՛ւր որ շնորհակալութիւն յայտնենք ու փառաւորենք քեզ՝ Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից: Ամէն:

Պարգեւատու բարիքներու, եւ խաղաղութեան աղբիւր, Տէ՛ր, մեր Աստուածը. սատանայական բոլոր խոռվութիւններէն խաղաղեցուր մեր միտքն ու խորհուրդները, թէ՛ այս գիշեր եւ թէ՛ ամէն ժամանակ, որպէսզի անցաւոր այս կեանքին մէջ քեզմով առաջնորդուինք, եւ հասնինք յաւիտեան կեանքին քաղաքութեանը, որ աշխարհի սկիզբէն իսկ պատրաստեցիր քու սուրբերուդ համար. եւ անոնց հետ միասին շնորհակալութիւն յայտնելով փառաւորենք քեզ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտենից: Ամէն:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

29.11-20

Ձեզի տրուած այս բոլոր պատգամները փակ պիտի մնան այս կնքուած գիրքին բովանդակութեան պէս, որ երբ կարդալ գիտցողի մը տան եւ ըսեն «Կարդա՛», պիտի պատասխանէ. «Չեմ կրնար կարդալ, քանի կնքուած է». իսկ երբ անգրագէտ մէկուն տան եւ ըսեն «Կարդա՛», պիտի պատասխանէ. «Կարդալ չեմ գիտեր»: Տէրը կ'ըսէ. «Այս ժողովուրդը միայն խօսքով մօտիկ է ինծի. իրենց շրթներով կը պատուեն զիս, բայց սիրտով հեռու եւ կտրուած են ինձմէ: Զուր տեղը զիս կը պաշտեն, երբ իմ պատուէրներուն փոխարէն մարդոց հնարած պատուէրներն ու տեսութիւնները կը սորվեցնեն»:

Ուստի ես ալ զիրենք պիտի պատժեմ եւ իրենց միտքերը պիտի փոխեմ. իմաստուններուն իմաստութիւնը պիտի խափանեմ, խելացիներուն խելքը պիտի կորսնցնեմ»:

Վա՛յ անոնց, որոնք կը փորձեն Տիրոջմէ պահել իրենց անօրէն խորհուրդները. վա՛յ անոնց, որոնք ծածուկ ծրագիրներ կ'որոճան եւ մութին մէջ կը գործեն, ըսելով. «Ո՛վ մեզ պիտի տեսնէ, ո՛վ պիտի ճանչնայ մեզ կամ գիտնայ՝ ինչ որ կ'ընենք»:

Վա՛յ ձեզի, ո՛վ կամակոր մարդիկ, մոռցա՞ք որ դուք կաւ էք եւ Աստուած է բրուտը. միթէ ստեղծուածը կրնա՞յ իր ստեղծիչին ըսել՝ «Դուն չստեղծեցիր զիս», կամ արարածը կրնա՞յ իր արարիչին ըսել՝ «Զիս իմաստութեամբ չես ստեղծած»:

**Շարունակել
Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԷՆ
ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ**

4.8-24

Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցէ՛ք այն բաները որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ գովելի: Եւ գործքով կատարեցէ՛ք այն ինչ որ ինձմէ սորվեցաք եւ ընդունեցիք, ինձմէ լսեցիք եւ իմ վրաս տեսաք. եւ Աստուած, որ խաղաղութիւն կու տայ, ձեզի հետ պիտի ըլլայ:

Մեծապէս ուրախացայ Տիրոջմով, որ վերջապէս ձեր միտքը ինկայ եւ ինձմով հետաքրքրուեցաք: Գիտեմ որ նախապէս ալ կը հետաքրքրուէիք ինձմով, բայց զայն արտայայտելու առիթը չունէիք: Ըսել չեմ ուզեր թէ բանի մը կարօտ եմ, որովհետեւ ես ունեցածովս գոհ ըլլալու վարժուած եմ: Զբաւորութիւն ալ ճանչցայ, առատութիւն ալ տեսայ: Վարժուեցայ ամէն տեսակի կացութիւններու եւ պայմաններու. թէ՛ կուշտ ըլլալու եւ թէ՛ անօթի մնալու, թէ՛ առատութեան եւ թէ՛ չքաւորութեան: Ամէն ինչ կրնամ տանիլ շնորհիւ Քրիստոսի որ զիս զօրացուց: Բայց լաւ ըրիք որ ինծի օգնեցիք նեղութեանս մէջ: Դուք ալ զիտէք, ո՛վ փիլիպպեցիներ, թէ սկիզբը երբ ես Մակեդոնիա եկայ Աւետարանը քարոզելու, ձեզմէ զատ որեւէ ուրիշ եկեղեցի չմտածեց իր ստացած հոգեւոր բարիքներուն փոխարէն նիւթապէս ինծի օգնելու մասին. մինչ դուք մէկ-երկու անգամ մինչեւ իսկ Սելանիկ ղրկեցիք ինչ որ ինծի պէտք էր:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ՄՍՏՈՒՄԾԱՇՈՒՄՆԵՐ**